



Հ. ԱՆԱՍՅԱՆ

ՄԻ ԱՆԾԱՆՈԹ ՀԵՂԻՆԱԿ ԵՎ ՆՐԱ ԵՐԿԻ ՆՈՐԱԳՑՈՒՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՎՄԱՍ ԱԳՈՒԼԵՑԻ (XVII-XVIII ԴԱՐ)




րեանի Պետական Մատենադարանում գրչագրների ուսումնասիրությամբ զբաղվելու ժամանակ անակնկալորեն հանդիպեցինք մի ձեռագիր հատորի, որի հետ միասին կազմված էր նաև մի հին տպագիր հրատարակություն։ Ուշագիր զննությունից պարզվեց, որ այդ տպագիր հրատարակությունը նորոգվում էր ներկայացնում ո՛չ միայն հայկական մատենագրության պատմության համար, որպես տպագրական նորահայտ մի նմուշ, այլ և իր բովանդակությամբ՝ նաև հայ մատենագրության պատմության համար, որովհետև երևան էր գալիս միաժամանակ մի հայ հեղինակ ևս, որի անունն ու աշխատությունը մինչև այժմ անհայտ էին մնացել։ Այս երկու հանգամանքները առիթ ծառայեցին սույն տպագիրն ավելի լրջորեն քննության առնելու։

Իր կազմի մեջ սույն տպագիր հրատարակությունը պարունակող հատորը Պետական Մատենադարանի № 8279 ձեռագիրն է։ Տպագիրը գտնվում է հատորի սկզբում և կրում է հետևյալ խորագիրը.

«Պատմություն Թովմայի առաքելոյն» ոտանաւոր չափիւք.

Արարեալ յումեմնէ Թովմայ երիցւէ ազուլեցույ, 'ի լիակատար պատմութիւնէ նորին։ Գրքի ծավալը, ներկա կազմի մեջ, 16×11 սմ է. էջերի թիվը՝ 80, անվանաթերթը ներառյալ։ Էջերը համարակալված են արաբական թվանշաններով և զարդափայլ են։ Խորագիրը կամ անվանաթերթը շրջանակված է միաձուլյ նկարներով։ Չորս անկյուններում զետեղված են ավետարանիչների խորհրդանշանները, վերևում (կենտրոն)՝ Քրիստոսի

կիսանկարն է, ներքևում՝ (կենտրոն) «գառն Աստուծոյ»-ն, ձախ կողմում ամբողջ հասակով նկարված է Հովհաննես Մկրտիչը, որի աջ ձեռքում բռնած ժապավենի վրա կար-



ԴՐԻ ԱՆՎԱՆԱԹԵՐԹԸ

դացվում է «Ձայն բառ» (=Ձայն բառբառյանապատի), իսկ աջ կողմում, դեմ առ դեմ, կա հայրապետական տարազով մի անձ, որ

հավանորեն Գրիգոր Լուսավորիչն է: Անվանաթերթի երկրորդ երեսում (էջ 2) կա մի պատկեր, որ ներկայացնում է Հոգեգալղստյան տեսարանը. սրա տակը դրված է մի տոն շարական «ՀԲ աշակերտաց» կանոնից:

Գրքի բովանդակության գլխավոր առարկան Թովմաս Ագուլեցու «Պատմութիւն Թովմայի առաքելոյն» բանաստեղծութիւնն է: Սրա բնագիրն սկսվում է էջ 3-ից, զարդանկարով, և վերջանում է էջ 55-ում: Այս ոտանավոր պատմությունը, որ ավելի քան 1000 տողից է բաղկացած, բաժանված է 11 գլուխների: Սրան հետևում է «Յայլոյ ումնմնէ նուստ վարդապետէ» Բարդուղիմեոս առաքյալի Հայաստան գալու և քարոզելու ոտանավոր պատմությունը, երեք գլուխներից բաղկացած (էջ 55—64). իսկ այս միջանկյալ ոտանավոր պատմությունից հետո գտնում ենք դարձյալ մի «Տաղ գովասանութեան սըրբոյն Թովմայի առաքելոյն ի նոյն իրիցէ» (էջ 64—66), այսինքն նույն Թովմաս Ագուլեցու: Հետո դրված են խաղերով շարականներ՝ «Կանօն Թովմայի առաքելոյն» (էջ 65—72) և «Կանօն Թաղէոսի առաքելոյն» (էջ 72—80):

Վերջում կա տպագրողի հիշատակարանը. «Գրեալ էր սոցա օրինակն ի 871 թին Հայոց: Տպեցաւ աստ, ՚ի 1183-ին: Յիշեցէք զՄիքայէլ Վարդապետն՝ որ եղև առիթ տպման սորա, արդեամբ Զաքարիայի որդի Տիրացու Յօհաննէսին. և մահտեսի Մատուրի որդի Ազարիային: Եւ զաշխատաւորս զԽաչերն և զԱնտօնն» (էջ 80):

Ըստ այս հիշատակարանի, ուրեմն, գիրքը տպագրված է հայոց 1183 թվականին, որ է մեր թվագրության 1734 թիվը, բայց տպագրության վայրը և տպարանը չեն նշված:

Ինչպես ասացինք, այս գիրքը, որպես Հայկական տպագրական արվեստի արտադրություն, անհայտ էր մնացել մեր մատենագետներին: Հ. Գ. Զարեհանյանը, իր «Հայկական մատենագիտութիւն» (Վենետիկ, 1883) և «Պատմութիւն Հայկական տպագրութեան» (Վենետիկ, 1895) երկասիրություններում, Հ. Ա. Ղազիկյանը, իր «Հայկական նոր մատենագիտութիւն»-ում (Վենետիկ, 1909), Թեոդիկը իր «Տիպ ու տառ»-ում (Կ. Պոլիս, 1912), Գ. Լևոնյանը, իր «Հայ գիրքը և տպագրության արվեստը» (Երևան, 1946) աշխատությունում, ոչ մի տեղեկություն չեն հաղորդում սույն հրատարակության մասին, այնպես որ ավելորդ չէ և ոչ էլ շահեկանությունից զուրկ աշխատել պարզել, թե որտեղի տպագրություն է հանդիսանում նա: Բայց նախ քան այդ ծանոթանանք նրա բովանդակության ու հեղինակին:

«Պատմութիւն Թովմայի առաքելոյն»-ը մի բովանդակաչափ երկար կրոնա-պատմական

բանաստեղծություն է, բաղկացած 272 տնից, յուրաքանչյուրը շորս տողանի, հետևաբար բնագրանը 1038 տող, հանգավոր և գրված միօրինակ չափով, որ է՝
 $4 + 4/4 + 4/4 + 4/4 + 4$:

Այս երկարաշունչ պոեմայի նյութն է Թովմաս առաքյալի քարոզությունն ու նահատակումը Հնդկաստանում և նրա նշխարների փոխադրությունը Հայաստան:

Այլևս խոսվում է 12 առաքյալներից յուրաքանչյուրին վիճակված քարոզչական գործունեության մասին, որից հետո երկար ներքող է հյուսվում Թովմասի մասին:

Բայց ինչպե՞ս նկարագրվում է Թովմաս առաքյալի մեկնումը դեպի Հնդկաստան, Հնդկաստանի Գնդափառ թագավորի վաճառական Արքանեսի հետ:

Գլխում պատմվում է ճանապարհին, Սադրակ քաղաքում, թագավորական հարսանիքում Թովմաս առաքյալի կատարած հրաշքի մասին, ինչպես և Քրիստոսի երևման ու արքունիքի և քաղաքի բնակչության դարձի մասին:

Դ գլխում պատմվում է, թե ինչպես Թովմասը Հնդկաստան հասնելով, տաճար կառուցելու նպատակով Գնդափառ թագավորի կողմից իրեն վստահված հարստությունը վերցնում և բաշխում է աղքատներին ու տնանկներին:

Ե գլխում պատմվում է Գնդափառ թագավորի զայրույթի, Թովմաս առաքյալի բանտարկության, մեռած արքայի դերը հարություն առնելու և այս հրաշքի հետևանքով հնդկական արքունիքի դարձի մասին:

Զ գլխում պատմվում է օձի խայթվածքից մեռած մի պատանու հարություն առնելու և սրա հետևանքով նոր դարձի մասին:

Է գլխում, պատմվում է, թե ինչպես Թովմաս առաքյալը, Հնդկաստանի Մոգեն թագավորի զորավար Մոփարի հրավերով, գրնում է նրա երկիրը ու բռնկում նրա կնոջն ու աղջկանը, որի հետևանքով դարձ է տեղի ունենում:

Ը գլխում պատմվում է, թե ինչպես Մոգեն թագավորը, Մոփարի, թագուհու, թագաժառանգ Վիժանի ու պալատականների մկրտվելուց հետո, բանտարկել է տալիս առաքյալին ու նորաբաններին և շարժարանքի ենթարկելուց հետո հրամայում սպանել Թովմաս առաքյալին:

Թ գլխում նկարագրվում է Թովմաս առաքյալի նահատակությունը:

Ժ գլխում նկարագրվում է Թովմաս առաքյալի նշխարների գողացումն ու փոխադրումը Միջագետք, նրա աշակերտ Քսանթիկոսի ձեռքով, ինչպես և այդ նշխարների վրա մի կուսաստանի կառուցումն ու վերջինիս ավել-

րումը Հուլիոս կայսեր օրոք՝ պարսկական ներխուժման ժամանակ:

ԺԱ գլխում պատմվում է պարսիկ զինվորականներից Ուուֆի տեսչի, որի ժամանակ հրեշտակից հրաման տրանալով, նա հավաքում է առաքյալի ցրված ոսկորները և մի լուսավոր աստղի առաջնորդությամբ բերում Հայաստան—նախ Աղձնյաց գավառը, Հոգձ գյուղի մոտ, իսկ հետո էլ Վասպուրականի Ռշտունյաց գավառի Պարծիս (կամ Պծիծս) գյուղը, ուր և այդ նշխարների վրա շինվում է մի հույակապ վանք: Վերջում պատմվում է Թովմաս առաքյալի աջ ձեռքի մատների փոխադրության և նրանց ղեկավարման մասին Գողթնյաց երկրի Ագուլիսի վանքում:

Թովմաս առաքյալի այս ոտանավոր պատմությունը մեկ շնչով գրված բանաստեղծություն է և կարդացվում է մեկ շնչով, Սիմեոն Ապարանցու և Մարտիրոս Ղրիմեցու պատմական հայտնի բանաստեղծությունների նրման*): Թեև ավելորդ է ինչպես լիզվի, այնպես և ռճի գոսակախությունն փնտռել և ընդհանրապես թույլ է ինքնատիպությունը այս երկարաշունչ քերթվածում, բայց և այնպես նա բոլորովին զուրկ չէ գրական արժեքից և հետաքրքրություն ներկայացնելուց: Գրական արժեքի տեսակետից նա ոչնչով չի գիշի Սիմեոն Ապարանցու և Մարտիրոս Ղրիմեցու հիշյալ աշխատություններին: Բանաստեղծական ավելանով նա նույնիսկ մի քայլ առաջ է կանգնած դրանցից և կարելի է ասել, որ եթե հեղինակը իր նյութի և աղբյուրների պարտադրած արտահայտական շրջանակների մեջ կաշկանդված չլիներ, մի շատ ավելի ընտիր գործ տված կլիներ: Մյուս կողմից այս բանաստեղծության մեջ նշելի է տաղաչափական արվեստի անթերի կիրառումը, որից փոքրիկ կամ հազվադեպ շեղումները պետք է վերագրել ոչ թե հեղինակին, այլ հրատարակիչներին, քանի որ աշխատությունը տպագրվել է նրա մահվանից հետո: Հեղինակի մասին տեղեկություն քիչ ենք գտնում: Թովմաս Ագուլեցին իր երկի վերջին տներում որոշ տեղեկություններ է տալիս թե՛ իր անձի և թե՛ այն պարագաների մասին, որոնք առիթ են ծառայել այդ աշխատության գրելուն: Ստորև բերում ենք վերջին ութ տունը, որոնք հեղինակի որպես հիշատակարան են հանդիսանում.

Ի թուականիս Հայոց Մեծաց.
Քրսան նրեք յոբելիսաց.
Չորս ամուկ թուք առ սա փակած.
Լինի այս երդ ի յոռք հանած:

Ընտրեալ ըզսա յերից ճառաց.
Ըստոյգն առեալ հընոց գըրաց.
Այրի էրէցս մահամբ հարած.
Թովմաս ի գեօղոյն յԱգուլեաց:

Իսկ Թումայի սըրբոյ վանից.
Ընտրեալ ոմըն միաբանից.
Հըմուտ գոլով այս տուրք ճառից.
Հարկ եդ վերայս այս պատճառից:

Ուտանաւոր շինել ասաց.
Ուժեղ սիրով միշտ պահանջեաց.
Չայս հարկեաց յերից պատճառաց.
Առնել հանդէպ բազում շահաց:

Նախ վանս սըրտիս իմ ցաւագին.
Շահել բանիւքս քաղցրագին.
Երկրորդ յիշատակ լաւագին.
Երրորդ պարծանք սըրբոյ վանքին:

Իսկ Միքայէլ վարդապետին.
Որ է միաբանից վանքին.
Է քաղցրաբար քան ըզոտին.
Նա եդ հարկ ինձ հողոյս յետին:

Բայց այրեալ կոճղս լըքեալ գետին.
Արարի նորոյն խըրատին.
Որք սմին շահեն բանից օգտին.
Յիշեն զիս ընդ վարդապետին:

Թէպէտ իմ միտքս աշխատին.
Բայց շահեցայ նորին խրատին.
Յաւուրս է գնալ յունաց երկրին.
Սա ժողվել գանձանակ վանքին:

(էջ 54—55)

Այս հիշատակարանից երևում է, որ հեղինակը բնիկ ագուլեցի է: Նա եղել է երեց և 1705 թվին, երբ գրել է իր աշխատությունը*), այրի էր. հավանական չէ, որ իր կողակցի մահվանից հետո նա երկար ապրած լինի, քանի որ «մահամբ հարած», «սիրտս ցաւագին», «այրեալ կոճղս լըքալ գետին» արտահայտություններով նա աշխատում է զգացնել տալ, թե որքան ծանր է ճնշել այդ վիշտը նրան: Այս դույզն տեղեկություններից կարող ենք եզրակացնել, որ Թովմաս Ագուլեցին ապրել է XVII դարի երկրորդ կիսում և XVIII-ի սկզբը:

*) Սիմեոն վարդապետի Ապարանցույ Վիպասանութիւն սակա Պահլավունեացն զարմի և Մամիկոնեանցն սեռի՝ Վաղարշապատ, 1870:

Կարգ և թիւ թագաւորացն հայոց, արարեալ Մարտիրոս վարդապետի Ղրիմեցույ (հատված), տես՝ E. Dulaurier, «Recueil des historiens des Croisades. Documents arméniens», t. I, Paris 1869, p. 684-687:

*) Ինքը տալիս է հայոց թվականով այսպես

23 հոբելյան $23 \times 50 = 1150$

4 «ամուկ» թիվ 4

Քրիստոնեական թվականի տարբերությունը 551

ներում: Նա իր ոտանավոր պատմություններ գրել է, ինչպես ինքն է հայտնում, Ագուլիսի վանքի միաբան Միքայել վարդապետի խնդրանքով ու ստիպմամբ— նախ որպես սփոփանք իր սրտին, երկրորդ՝ որպես հիշատակ և երրորդ՝ որպես պարծանք վանքի համար:

Հիշատակարանը մեզ տեղեկություն է տալիս նաև հեղինակի օգտագործած աղբյուրների մասին:

Թովմաս Ագուլեցու աշխատությունը, պետք է նկատել, պատմական բնույթ ունի, թեև կրոնա-լիզենդար նկարագրով: Հեղինակը ոտանավոր-պատմության ճակատում նշում է, թե նա առնված է «Ե լիակատար պատմութենէ նորին», իսկ հիշատակարանում էլ ասում է, որ իր աղբյուրները փղել են հին գրքերից առնված ճառեր:

«Ընտրեալ ըզսա յերից ճառաց.

Ըստողն առեալ հընոց գըրաց».

Ո՞րն էր արդյոք այդ լիակատար պատմությունը: Այս խնդրի քննարկումը մեզ մի փոքր կտանի դեպի մատենագրական խնդիրների բնագավառը: Իրոք հայ մատենագրության մեջ ծանոթ են Թովմաս առաքյալի պատմության դրվագները ներկայացնող բը-

նագրեր, ինչպես օրինակ Պետական Մատենադարանի № 1737 ձեռագրում՝ «Պատմութիւնս սրբոյ առաքելոյն Թովմայի» վերնագրի տակ (թղ. 109ա—123ա): Այս ամբողջական բընագիրը հրատարակված է նաև Զ. Ք. Չրաքյանի կողմից, ըստ վեներաբլան օրինակների, այն աղտաքին տարբերությամբ, որ բընագիրը բաժանված է երկու մասերի, որպես տարբեր բնագրեր, որոնք կրում են և առանձին վերնագրեր*): Բայց այդ երկուսը ուրիշ բան չեն, քան մեկը մյուսի շարունակությունը և միասին վերցրած համապատասխանում են Մատենադարանի № 1737 ձեռագրի բընագրին:

Արդ համեմատելով այս «Պատմութիւն»-ը Թովմաս Ագուլեցու աշխատության հետ, առաջին իսկ տողերից ու տներից նկատում ենք, որ մենք գտնվում ենք արդեն «լիակատար պատմութեան» հետքերի վրա:

Համեմատության համար վերցնում ենք Պետական Մատենադարանի ձեռագիր օրինակը, որի բնագիրն ավելի ընտիր է քան Չրաքյանի հրատարակածը և միաժամանակ ընթերցվածներով ավելի մոտիկ է Թովմաս Ագուլեցու գրածին:

Թովմաս Ագուլեցի, էջ 3 և 6

Յետ յարութեան անմահ բանին.
Արկեալ վիճակ ընտրեալ հօտին.
Նդեալ յերկոտասան բաժին.
Ոլորսս երկրի բոլորովին:

Եւ Թօմաս որ ճառս է նորին.
Կից Թաթէի եօթանասնին.
Սըմա երկորեակ ասէին.
Որ վիճակեալ սըմա Հընդին:

Ո՞չ կամէր քնալ առ ի Հընդին.
Վասն հեռադոյն ճանապարհին.
Եւ պատճառէր վասն խորշակին.
Եւ անընդհատ հետևակին:

Նմանությունն ակներև է: Բայց այս Ա գլխում, որի 1-ին, 17-րդ և 18-րդ տներն է ներկայացնում վերոհիշյալ հատվածը, Թովմաս Ագուլեցին բնագրից դուրս մուծումներ ունի. այսպես՝ 3—16 տները նվիրված են մյուս 11 առաքյալների թուղցիկ պատմությանը, որ անշուշտ քաղված է մյուս առաքյալների վարքերից ու վկայաբանություններից: Դրանից բացի, նա Թովմաս առաքյալի մասին հյուսել է ինքնուրույն երկար ներբող, որով էլ վերջանում է գլուխը: Սակայն շեղումները վերաբերում են միայն այս Ա գլխին, Բ գլխից սկսած Ագուլեցին հետևում է բնագրին անշեղ, քայլ առ քայլ և նույնիսկ

Ձեռագիր № 1737, րդ. 109ա

(Ի) Ժամանակին իբրև ժողովեալ էին առաքեալն (յ) Երուսաղէմ... և հոգային առ միմեանս, թէ ո՞րպէս քարոզեսցեն զգալուստ տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի: (Ա)րկին վիճակս ի մէջ իւրեանց, եհաս վիճակ և բաժին Թովմայի առաքելոյն երթալ ի Հնդկիս: Եւ նա ոչ կամէր երթալ անդ, քան զի ասէր, թէ ոչ կարեմ համբերել տօթոյ աշխարհին այնորիկ, քանզի հիւսնդ եմ ես:

տեղ-տեղ բառ առ բառ, մինչև Թ գլխի վերջը: Գաղափար տալու համար թե Ագուլեցին ինչ ձևով է օգտվել իր այս աղբյուրից, առաջ ենք բերում Գ գլխում նկարագրված Սաղոսակ քաղաքի թագավորական հարսանիքի պատմությունը, որն արդեն ինքնին մի առանձին դրվագ է ներկայացնում:

*) ա) «Ե յիշատակ սուրբ առաքելոյն Թովմայի թէ ո՞րպէս յերուսաղէմէ ի Հնդկիս շոգաւ և բ) «Վկայութիւն Թովմայի առաքելոյ որ կատարեցաւ ի Հընդիկս», հրատ. Զ. Ք. Չրաքյանի, «Անկանոն գիրք առաքելական» (Վենետիկ, 1904), էջ 369—387 և 388—400:

Թովմաս Ագուկեցի, էջ 12—14

Իբրև հասին յայնկոյս ծովուն.
Ի քաղաքն Սաղրակ անուն.
Գայր ձայն թրմպկի քրնար փողուն.
Որ էր անդէն հարսանեաց տուն:

Ձի մեծածախ հարսանիք էր.
Քաղաքին թագաւորի դրստեր.
Եւ քարոզիչն աղաղակէր.
Եկք և բռնակք անդ կերակրէր:

Ձթօմաս և զԱրբանէս մուծին.
Ի մէջ հարսանեաց նըստուցին.
ՁԱրբանէս դահոյս հանգուցին.
Եւ զԹովմաս ընդ ոսմկաց տոցին:

Ի յուտել և ըմպել ոսմկին.
Թօմաս նըստէր յո՛յժ լըռագին.
Ըզնա տեսնալ մատրուակին.
Հա՛ր զերեսն ապտակ սաստկագին:

Ասէր զի՞ նըստիս տըխրագին.
Իբր զտուն սրգոյ տըրտմագին.
Նայեաց Թովմաս արտասւագին.
Եւ անիծեաց յո՛յժ սաստկագին:

Ասաց ձեռքս այս որ զիս հարին.
Առցեն շունք բերեն այս պարին.
Ձայն բան լրեւալ փողահարին.
Իմացեալ մըտածէր շարին:

Իսկ բազմելոց ջուրն հատին.
Ձսափորն առեալ մատրուակին.
Գընաց բերել ջուր փութագին.
Խրախացելոցն քաղցրագին:

Եւ ի գընալ մատրուակին.
Եւ մայրէն առիւծ ահագին.
Եւ պատառեաց զնա մանրագին.
Ըստ առաքելոյ նըսագին:

Ձեռագիր № 1737, րդ. 109բ—111ա

Եւ իբրև անցին նոքա յայնկոյս ծովուն և հասին ի քաղաք մի որում անուն էր Սեղրաք. և լուան նոքա զձայն փողոյ սրնկի, թմկի և քնարի. և զձայն ցնծութեան և ուրախութեան: Ասէ սուրբ առաքեալն ցվաճառականն. Ձի՞նչ է այն ձայն ցնծութեան և ուրախութեան: Եւ ասէ վաճառականն. Դուստրը թագաւորին Սեղրաքայ միամօր է և տան զնա այսօր առն. այն է ձայն ցնծութեան և ուրախութեան. և պատուիրակս թողեալ է ընդ շորեսին յանկինս քաղաքին, եթէ ամենայն ոք որ լսիցէ ի հարսանիս գայցէ, առն թագաւորին տեարք և ծառայք, ճոխք և աղքատք, օտարք և մանկունք քաղաքիս. և որ ոչ եկեսցէ ի հարսանիսս, պատիժս կրեսցէ ի թագաւորէն:

Վաճառականն ասէ ցԹովմաս. Ե՛կ և մէք երթամք ի հարսանիսն, զի մի՛ պատճառս հասցէ ի թագաւորէն մեզ: Եւ զնացին երկոքին ի հարսանիսն, և անց սուրբ առաքեալն և բազմեցաւ ի մէջ բազմականացն և Արբանէս վաճառականն բազմեցաւ այլ տեղւոյ:

Եւ իբրև կերան և արբին, Յուգայ Թովմայ ոչ ինչ ճաշակեաց: Ասեն ցնա սեղանակիցքն. Ա՛յր դու, զի՞ եկիր այսր զի ո՛չ ուտես և ո՛չ ըմպես: Ասէ սուրբ առաքեալն. Վասն իրաց որ առաւել է քան զուտելն և ըմպելն. լուայ զի պատուիրակք թողեալ է թագաւորին ընդ շորեսին յանկինս քաղաքին, թէ ամենայն ոք որ լսիցէ ի հարսանիս եկեսցէ. ես եկի՞ զի կատարեսցին կամք թագաւորին, այլ ո՛չ եթէ ուտել և ըմպել: Յայնժամ վարձկանն շրջէր առ ամենեսեանսն և երգէր. իբրև եկն առ սուրբ առաքեալն, կայր առ նմա և երգէր. մատեաւ մի ի մատուկաց, ա՛ծ ապտակ առաքելոյն: Հայեցաւ ի նա սուրբ առաքեալն և ասէ. Տէր իմ Յիսուս Բրիստոս թողցէ քեզ յայնմ աշխարհին որ գալոցն է, բայց այս աշխարհիս ցուցցէ զգօրութիւն ապտուածութեան իմոյ. ձեռնդ որ եհար յիս, տեսանիցեմ ՚ս զգա զի քարշեցեն շունք: Եւ յինքն սկսաւ աւրհնել և ասել ի զէմս եկեղեցոյ, յերթայեցեթէն բարբառով...: Իբրև և զայս այսպէս աւրհնէր, ո՛չ ոք լսէր բայց միայն վարձկանն քանզի երթայեցի էր:

Եւ հատաւ ջուր ի սակարացն, և ա՛ռ մատրուակն զսափորն և չոգաւ զջրոցն. ել առիւծ մի յանտառէն, էբեկ զմատուկակն, և արար անդամ անդամ և բարձեալ շուն մի թաթ զաշ բազուկ նորա և եբեր է ընկեց ի մէջ բազմականին: Յայնժամ վարձկանն զփողն խորտակեաց, և եկն անկաւ առաջի ստաբելոյն և ասէ. Այրս այս կամ Աստուած

Առ ժամու շուն մի հասանէր.
Առեալ դաջ ձեռն անդ մըտանէր.
Եւ փողահարը տեսանէր.
Բազմականացն ծանուցանէր:

Միրտ նոցին ահ մեծ անկանէր.
Երբ այն հրաշալի բան լինէր.
Փողահարն առ ոտս անկանէր.
Եւ զԹովմաս տէր յայտնաբանէր:

Իսկ ի լրսել թագաւորին.
Անկեալ առ մերձ յոտըս նորին.
Գրնալ հայցէր սենեակ հարսին.
Օրհնել զնոսա զի աճեսցին:

Եւ երթեալ Թովմաս ընդ նոսին.
Նդ ըզձեռն իւր ի գլուխ նոցին.
Օրհնեաց ասաց ընդ վերջ խօսին.
Լիցի ընդ ձեզ բան Յիսուսին:

Ժ—ԺԱ գլուխները կազմելիս Ագուլեցիւն օգտուել է մի այլ անվավերականից, որ է՝ «Պատմութիւն յաղագս գիւտի նշխարաց սուրբ առաքելոյն Թովմային»*), որի հետ նմանապէս ընթանում է քայլ առ քայլ, պատմելով առաքյալի նշխարների փոխադրութիւնը Հնդկաստանից նախ Միջագետք և ապա Հայաստան, մինչև Ռշտունյաց գաւառը:

Մեր կարծիքով այս անվավերականը, եթե ոչ ամբողջութեամբ, գոնե կարելու մասերով հայկական է իր ծագումով: Միջագետք փոխադրութեան պատմութիւնը կարող է և ասորական ծագում ունենալ, բայց մեզ ծանոթ մատենագրական տվյալների համաձայն, թվում է թե ուրիշ լեզուներով չկա նշխարների փոխադրութեան այս պատմութիւնը: Համենայն դեպս պարզ է, որ սա ևս իր հերթին հանդիսացել է Թովմաս Ագուլեցու աղբյուրներից մեկը:

Իսկ ԺԱ գլխի վերջում պատմված այ ձեռքի մատների Ագուլիս փոխադրութեան պատմութեան գրավոր աղբյուրներ հայտնի չեն մեզ, հավանորեն այս մասում հեղինակը օգտագործել է անգիր ավանդութիւնը: Բերված համեմատութիւններից հետո վստահորեն

է և կամ առաքել է նորա, զի ես լուայ զինչ ասաց սա մատուցակին, քանզի ասաց թէ ձեռնդ որ հհար զիս տեսանիցնմ ես զի բարշեսցեն զդա շունք: Եւ կէսքն ի նոցանէ հաւատացին ի բանն վարձկանին և կէսքն ոչ հաւատացին:

Իսկ թագաւորն իբրեւ լծաւ զայս, լուսեկն անկաւ առաջի առաքելոյն և ասէ. Ե՛կ ընդ իս, տէր, և աւրհնեա՛յ զիս. դուստրն իմ միամօր է և տամ զնա այսօր առն: Իսկ սուրբ առաքեալն ոչ կամէր նրթալ ընդ նմա, զի չէր տեսեալ զՔրիստոս աշխարհին աշխարհի. և բռնադատեաց զնա, յարուցեալ զնաց: Եւ իբրեւ եմուտ ի սենեակն, դուք սենեկին փակեալ էին և ոչ գոյր անդ բայց միայն հարսն և փեսայն. և եհան թագուհին արտաքս զամենեւեան զփեսայէրսն և զհարսնաքորսն և նստաւ սուրբ առաքեալն և վարդապետեաց նոցա զՔրիստոս և ինքն էլ արտաքս:

կարելի է ասել, որ հեղինակի հիշատակած այն երեք ճառերը, որոնցից ինքն ուղղակի օգտուել է, հանդիսանում են Զրաքյանի հրատարակած անվավերականներից հետևյալները. — ա) «Ե լիշատակ սուրբ առաքելոյն Թովմայի թէ տ'րպէս յերուսաղէմէ ի Հնդկիս չոգաւ», բ) «Վկայութիւն Թովմայի առաքելոյ որ կատարեցաւ ի Հնդկիս», որոնք երկուսով միասին համապատասխանում են Երեանի Պետական Մատենադարանի № 1737 ձեռագրի ամբողջական բնագրին, և գ) «Պատմութիւն յաղագս գիւտի նշխարաց սուրբ առաքելոյն Թովմայի»:

Թովմաս Ագուլեցու գրավոր աղբյուրների հարցը սպառած համարելով հարկ է նշել, որ մինչև վերջին դարերը «անվավերական» կոչված գրվածքները որոշ հեղինակութիւն էին վայելում հայերի մոտ. այդ երևում է և նրանից, որ հետևադարձան գրագրերում նրանք տակավին կարելու տեղ էին գրավում: Հայ մատենագիրներից ոմանք օգտուել են դրանցից, մի շարք ստեղծագործական երկեր տալով, ինչպէս օրինակ Թովմաս Ագուլեցուց առաջ, XV դարի սկզբում Առաքել Սյունեցին իր նշանավոր «Աղամգիրք»-ը շարադրելիս և ուրիշներ:

(Շարունակելի)

*) «Անկանոն գիրք առաքելական» հրտ. 2. Ա. Զրաքեանի, էջ 417—427:

